



24. ՀՐԱՇՔ ՍՈՒՖՐԵՆ

Իրեք տեգերկին կէղնին: Մեծ ու միջնեկ տեգերկնկտոց աշքնի դուս կէղնի՝ ծուռ ճամպով կը քելեն: Պատիկ տեգերկին՝ հորօրդի ու նամուսով կէղնի: Մեծ ու միջնեկ տեգերկնկտիք գընկնան պղտըկի հետ հըգնըռ կենին օր գէն լե բերին վըր ուրանց ճամպուն:

— Չէ օր չէ՛,— կըսեր պատիկ տեգերկին,— մամիկ, քուրիկ, ես իմ անուն չըմ կոտրի, գիմ բախտն իմ մարդու հետ չըմ ավրի: Էդ սաբարուն լե չընցնեն դառնեն, բաբա կը շափեն, քանայի խոսք կը թալեն, գգլուխ կը փամփեն, օրեօր կը հալվեր ու կը մաշվեր:

— Կնի՛կ գավակ,— կը հարցու մարդ,— չորի՞ն հմլա օրեօր կը հալվիս ու կը մաշվիս, սաբաբն ի՞նչ է:

— Քա՛ մարդ,— կըսե կնիկ,— հալ ու քեֆիաթ՝ հմլա-հմլա. թե չըս ավտընա՝ թըղ քու ախպըրտիք էրթան արտ, արի դըրդի փաթի՞ի ի խսիլ, դնիմ ինա մութ տեղ, դու քու աշքով տե՛ս թե քու ախպոր կնկտիք ինչե՛ր կէնին:

Տղեն կը փաթվի ի խսիլ, կը կանի տան մեկ դեն, ուր աշքով կը տեսնա հանդե էրկու մարդ խոնջա-բողջով ներս էկան, նստան ախպըրկնկտոց հետ, կերան, խմին, քեֆ էրին, չելան ջայնըման գացին: Ախպերն հմա գելնա խսլի միջեն, կը վաճի արտ ախպըրտոց մոտ, կը բոռա.

— Ախպրտի-ք, ձեր կնիքորք հմլա-հմլա րա՛ն կէնին:

Կշտի լծքվորներ, քաղվորներ չըմեն գիմնան: Ախպրտիք կառնին ղուրանց գերնդիք, կը վաղին ղըխ ուրանց ախպեր, օր աղեկ մե ղնգըսին, ախպեր կը փախնի, էլ շէրթա գեղնուվի, կիտա սար ու ձորն ի յառեջ ու կէրթա. շատ կէրթա, քիչ կէրթա, կը մտնա ուրիշ թագավորի մե հող, կը նստի գամին, գելնա թագավորի քաղաք, կէրթա կէղնի թագավորին խաղարած:

Կնկտիք տեսան, օր ուրանց տեգը ղուրանց էրեց խայտառակ, ուրանց էրկըտոց յառջև սևերես, գելնան պառավ մե կը գտնան, լըփ մե օսկի գըլնան ի ձեռքէ կըսին:

— Պառա՛վ, գընկնաք գեղոց-գեղ, քաղքե-քաղաք, մըջ քար, մըջ էրկաթ՝ մեր տեգը կը գտնաս, հմալ գաք ու ղուլար կը բանցուա, օր հոգով-մարմնով կորցուա, ուր իղ ու թոզ շէրկա մըջ ախշըրքին:

Պառավ կէրթա, կէրթա՝ կը հասնի ծովու մոտ, ձձում մե կը գտնա, գրերան սարեկ-սեկով կը կապե, կը թալե վըր ծովուն, օձ մե կէնե խամշի կառնե ձեռք, կը հեծնա զձձում ու գընկնա վըր ծովուն, կը քշե գելնա թագավորի քոշկի յառեջ կը կանի, հարց ու փորձ կենն, պղտիկ ախպեր կը գտնա, գիմնա օր էղեր է թագավորին խաղարած: Ծոկան ի ձեռք, կուզեկուզ, տքտքալով կը մտնա թագավորի մոտ, գլուխ կիտա, կանի:

— Թագավոր ապրած կենա, — կըսե պառավ գլուխ ժածալով, — անավլատ, անթավլատ կնիկ իմ, տեր ու տիրական շունիմ, թըղ քու օրդու գլխու սաղաղեն էղնի, ընձի խարուլ էրե խավա-օջախն աշճու, խավաջոս յառջև խզմաթ էնիմ, կտոր մե հաց ուտիմ, քըզի դուաճի էղնիմ:

Թագավոր կը խղճա վըր պառվուն, էմը կէնե, օր տանին աշխանեն՝ աման-շաման լվա, կտոր մե հաց ուտե, ուրին դուա էնե:

Պառավն ու խաղարած չըմնօր զիրար կը տեսնան: Պառավ՝ վտղեն կը ճանչնա, լե տղեն զպառավ կը ճանչնա: Գընցնի ամիս մե, թե տարի մե, թագավոր թագարուկ կը տեսնա, օր գուր տղեն կարգե: Քոշկ ու սարա շինել կիտա հարս ու փեսին, զպատեր կը կանգըցուն, զփանջարեք կը բանան, կը մնա յառիք, օր գերան թալեն վրեն ծածկեն. ինչ գերան թալինք, ինչ գերան շը թալինք, շա՛մ թե կաղնի, պառավ գիկա կանի մեջտեղ, կըսե:

— Գացեք թագավորին ըսեք՝ ուրին, ուր տղին լայն՞ղ է, օր թագա հարս ու փեսի քոշկ ու սարեն շամ յան կաղնի գերներով ծածկին, ուրիշ թագավորներ լսին ու կուահին, ի՞նչ կըսին. օր ընձի լսե. շըմքի իդա ծամերսի թագավորներու, վազիր-նազիրներու տներն

իմ սիվտըկցուցի, կը ճամպե Բլբլեվին ծառ բերե, ընդրա ճղեր տըն-
կե, էրկու-իրեք ամսվա մեջ կը մեծնան կէղնին գերան, էդ դերնե-
րով ծածկե հարս ու փեսի օթըխներ, օր գիշեր ցերեկ բլբլան ու
ճլվլան, սիրտ ուրանց ուրախնա:

Թագավոր ուր նաղիր-վազիրներով խորուրդք կէնին, ո՛ր ճամ-
պինք, ո՛ր չը ճամպինք՝ պառավ խաբար կէնե.

— Ինչի՞ շիվարած մանցած ին. թըղ ճամպե ղխազարածն, օր
ուարապ-սարաբ կը զվոնե խազերու յետե, վիզն էղեր է քընց բուղա
գմշու վիզ:

Թագավորի հրամանով վազիր խազարածին կըսե.

— Պտի էրթաս Բլբլեվին ծառի ճուղեր բերիս, թե շէրթաս՝ շս-
լադ լը բերիմ, զվիղդի կիտամ կտրել:

Խազարած կը սեվշիվրի մնա, Բլբլեվին ծառ ի՞նչ է, յո՛ւր կը
գտվի, ի՛մալ կը բերվի: Կէրթա մտնա թագավորի ձիանոց, թառի
տակ կապուկ Մոտոտ քուռկու մոտ ու հոնկուռ-հոնկուռ դիլա: Մըռ-
տոտ քուռակ հրեղեն կէղնի, գելնա լեզու, կըսե.

— Չոռ ու ցավ քըզի, յորի՞ն գիլաս: Գնա թագավորից զիս
յուղե, արաբ թիմարի մե տուր ընձի, էրկու-իրեք օր գարի, առվուտ
կուշտ կերցու, թամբ զարկ վրեսի, հեծի, ես քըզի յըմեն ճամպեք
կը ցուցում:

Խազարած սիրտ կառնե. Մոտոտ քուռկու ըսածի պես կէնե,
աստված կը կանչե ու գընկնա ճամպա: Էլ դար ու դաշտ, էլ քար ու
քոռ, էլ դետ ու առու չը մնա, օր հազար ու մեկ շարշարանքով ու
տարտածարանքով գընցնան կէրթան: Կէրթան, կէրթան՝ կը հասնին
ամրվենի սարի մե տակ. սարի վրեն պրակ ու մեշա, ծառ ու ծաղ-
կունք, հավք ու հավքորեք, էն դախ օր քամին կը ղարկե՝ հավար
տեսակ բլբլուն ու ճլվլուն ձեն գելնա, օր աստծուն, մարդուն փառք
կիտան:

Մոտոտ քուռակ գելնա լեզու.

— Տղա՛, ըշտե իդա է Բլբլեվին մեշեն, յիջի ցած, տաս-քսան՝
ճուղ կտրե, հեծի ղիս, օր փախնինք աղատվինք: Իշկե՛, քըզի մկավ-
նե կըսիմ, ձեն օր գընկնա անկաջդի, շէղնի դառնաս յետեղի իշկիս,
օր դառձար՝ էրկուքս լե կէզնինք քար:

Տղեն գիջնա ձիուց, դասթե մե ճուղ կը կտրե, կը կապե, վոռ-
զով կը հեծնա գքուռակ ու կը փախնին: Մեշի ծառեր, քարեր, պա-
լեր, հավքեր գելնան լեզու, կը բոռան.

— Հողեղեն տարավ զհրեղեն՝ն, հողեղեն տարավ զհրեղեն՝ն:

Տղեն ըսկի յետև կը դառնա՞, կիշկե՞: Ձրնդոնց սահման օր
գընցնան՝ էլ ձեն չըլսվի, կազատվին դիկան հասնին թագավորի
քաղաք: Զճզնեք կը տնկին, էրկու-իրեք ամսվա մեջ կէղնին գերան:
Ուստեք կը կանչին, օր ղգերներ սղոցին, ուրագով տաշին, նա՛
սղոց կը բանի, նա՛ ուրագ: Կը շիվրին մնան:

Պառավ խաբար կէնե վաղիրին, վազիր՝ թագավորին:

— Հողեղենի ուրագ, սղոց չըն բանի մըջ Բլբլվին ծառին:
Բլբլվին մեշին մոտիկ գերեզմնոց մե կա, էդ գերեզմնոցի մեջն է
հորուկ ուստեն, յա ուստեն պտի բերել տաք, յան ընդոր ուրագն
ու սղոց, օր էդ ծառեր տաշվին ու սղոցվին:

— Է՛, ո՞ն ճամպինք, ո՞ն չը ճամպինք:

Պառավ կըսե.

— Խաղարածն օր չէրթա, ուրիշ էլ ո՞ն կոնա էրթա: Բլբլվին
ծառ բերող՝ ընդոր ուստեն լե կը բերե:

Խաղարած էլման կէրթա Մոտոտ քուռկու մոտ, մսրի չառշև կը
նստի ու գիլա: Քուռակ կըսե.

— Մի՛ լա, մը վա՛խենա: Յելի ընձի արար թիմարի մե տուր,
կուշտ կերցու, թամքե, հեծի էրթանք, աստված օղորմած է:

Կէրթան, կէրթան՝ Բլբլվին ծառերու մեշի տակ կը կանին,
կէրթան նաճրի գերեզմնի վրեն կը բոռա.

— Ուստա նաճա՛ր, թագավոր ղըրղի կը կանչե: Յելի առ զքու
սղոցն ու ուրագ էրթանք Բլբլվին ծառնեք տաշե, թագավորի տղեն
կը կարգվի, հարս ու փեսի յօդեք ծածկին, օր հարսնիք էնին:

Ուստեն գերեզմնի միշեն ձեն կիտա, կըսե.

— Մըզի հրամանք չկա, օր մեր տեղեն ժած գանք, լե սղոցն
ու ուրագ իմ գլխու վերև հորուկ է, հանեք տարեք:

Խաղարածն կառնե զուրագն ու սղոց կը բերե կիտա վաղիրին,
վազիր զծառեր կիտա սղոցել, տաշել, օր կը հանին քարե պատե-
րուն՝ կը գլորին գընկնան ցած: Պառավ, քու հոգու դոնեք փակվի,
թե ի՛նչ շար պառավ իս, խաբար կը ճամպե թագավորին ու վազիր-
նազիրին.

— Զխաղարած ճամպեք ուստի մոտ, հարցու չիմնա՛ չորի՞ն
Բլբլվին գերնեք վըր պատին չըն կանի, կը գլորին պատին ցած:

Խաղարած կէրթա Մոտոտ քուռկին կը պատմե պառվու էրած-
նեք: Քուռակ կըսե.

— Մը՛ վախենա, աստված օղորմած է, չելի ընձի արար թի-
մարի մե տուր, կուշտ կերցու, լուսուն գընկնանք ճամպա:

խաղարածն ու քուռակ կէրթան, կէրթան կը կանին ուստա նս-
ճարի գերեզմնի վրեն, խաղարած կը բռռա.

— Ուստա նաճա՞ր, թագավոր ճամպեր է զիսի; կըսե. «Բլբլի-
վին ծառի գերնեք կտրեք ինք, տաշեր ինք, հանել տվեր ինք վըր
պատերուն, մկա չըն կանի վըր պատերուն, կը գլորին, դընկնան
ցած. ի՞նչ էնինք օր գերնեք կանին վըր պատերուն»:

Ուստեն ձեն կիտա, կըսե.

— Պառվու՞ վիզ կոտրի, էդ պառվու կախարդութենեն է, օր
գերնեք չըն կանի վըր քարե պատերուն: Մեկ տլըմս կա՝ օսկի գտեք,
հալեք թափեք իրեք սալ, էդ սալեր դրեք գերնեքու դիտու տակ՝ կը
կանին:

Տղեն կըսե.

— Ուստա՛ նաճար, թագավոր խնդիրք կէնե, օր ուր պասյ-
թագավորին ըսիս՝ զուր թոռ կը կարգիմ, հարսնիք պտի էնինք, չը
կոնս՞ գա մեկտեղ հարսնիք էնինք:

Ուստա նաճար թագավորի հոր կըսե, թագավորի հեր հմլա
չուար կիտա.

— Մենք մեր տեղեն չընք կոնա ժած գա, հրամանք չկա, բլի
զիմ գաստմալ կիտամ տարեք նշանաբան, տեսնան, ավտընան՝ օր
ե՛ս իմ ճամպի դաստմալ, թե նշանաբանին լե չավտընան՝ իմ տղին
կըսիս՝ ձիանոցի մեջ Մոտոտ քուռկու տակ իրեք գուգում օսկի կա,
թըղ հանին, հալին, թափին, օսկե սալ շինին, օր դնին գերնեքու
տակ, գերնեք կանին վըր պատերուն:

Տղեն կառնե զգաստմալն ու կը հեծնա զքուռակ ու գիկա թա-
գավորի մոտ, զգաստմալ կիտա, զուր հոր ըսածներ կը պատմե:
Յետին հաղ տղեն կըսե.

— Թագավոր ապրած կենա, քու պապ օսյաթ մե լե էրեց՝ մա-
յամ-մայամ զձձում հեծնող շար պառվուն քոտով-գլխով թըղ կոր-
ցու, թե չէ՝ օր մե մեծ փորձանք կը բերե վըր ուրին:

Թագավոր, իմալ օր պապ թանրի էրեք էր, զպառավ կապեց
կատողուկ ձիու պոչից, թողեց սարեր, էղավ շնաստակ: Մոտոտ
քուռկի տակ փորել տվեց, իրեք գուգում օսկի հանեց, դմեկ տվեց
տղին, զէրկուս վերցուց ուրին: Օսկի սալեր շինեցին, զհարս ու փե-
սի օթըխներ ծածկեցին Բլբլիվին ծառի գերնեքով, յոթ օր յոթ գի-
շեր հարսնիք էրին: Հարսնիքն օր վերջացավ, տղեն գնաց թագավո-
րին գլուխ տվեց, պագեց զձեռքն, ըսեց.

— Իմ կերած ազն ու հաց հալալ էրե, ընձի իգին տուր էրթամ
հասնիմ իմ տան ու տեղին: Ընձի գուգում օսկին պետք չէ, մինակ

էն Մոտոտ քուռակ տուր, օր հեծնամ, չոտքով չըմ կոնա քելի, ճամ-
այեն չերկենն !:

Բագավորն ըսեց.

— Չէ՛, օրդի, ամակ շատ իս տվի ընձի: Գուգում օսկին լե քը-
յի, Մոտոտ քուռակ լե, աղ ու հաց լե հալալ էղնի:

Տղեն հեծավ գՄոտոտ քուռակ, իուրջի մե օսկի թալեց ի թարք,
կանչեց զուր աստվածն ու չընկավ ճամպեն: Գիկա, գիկա՝ կը տես-
նա մարդ մե հանդե առջև սեղան-սուֆրեն պարզուկ, վրեն հաց ու
զաղ, իըսե.

— Յամա՛ն, ես անոթի մեռա:

— Ախպե՛ր,— կըսե տղեն,— հանդե առջևգի հաց ու զաղ լիքն
է, յորի՛ն պտի անոթի էղնիս:

— Ես դեղի ոես ենք, զուլմ շատ կէնենք, գիջեր ցերեկ զֆա-
խիր-ֆուխարին կը գուպենք ու կը շուպենք, կուտենք, կը խմենք, քեֆ
կէնենք, իդա դունիեն լե հմլա անոթի իմ:

— Տեղն է, գնա քաշե, հոգիդ թըղ չելնա,— կըսե տղեն:

Տղեն գիկա, գիկա՝ կը տեսնա կնիկ մե հագած խպած՝ կը բոռա.
կըսե.

— Յամա՛ն, ցրտու մեռա՛, ցրտու մեռա՛:

— Քուրի՛կ,— կըսե տղեն,— դու իդա հմլա հագուկ, խպուկ իս,
չորի՛ն պտի մըսիս:

— Ախ,— կըսե կնիկ,— ես զանգին տան հարս ենք, կը հագ-
նենք, կը խպենք, աըկուգ աղքըտներուն քըռջի կտոր մե չըտվի,
էնոքի հմլա կը մըսիմ ու կը վկվկցում:

— Տեղն է, գնա վկվկցու, հոգիդ թըղ չելնա:

Գիկա, գիկա՝ կը տեսնա մարդ մե իրեք պղինձ դրեր է վըր օջը-
խին, շուր կէռցու: Ջրերն օր կէռան՝ մեկ չեզրի պղընձի կաթիլներ
կը թոնան կէրթան մեկել չեզրի պղընձի վրեն գընկնան, էդ պղընձի
կաթիլներ լե կը թոնան գընկնան վըր մեկել պղընձին. օրթլախի
պղինձն օր կը քլթլա՝ ուր կաթիլներ դեմ գընան վերև ու էլման կը
թափին ուր մեջ:

— Ախպե՛ր,— կըսե տղեն,— իդա պղնձներու մանեն ի՛նչ է,
ընձի չըս ը՛սի:

— Իդա չեզրի պղնձներ էն կնկըտիքն ին, օր գիջեր ցերեկ բամ-
բասանք կէնին, կը ճոշան, գեշ ճամպով կը քելին, միամիտ կընկը-
տիք ճամպուց կը հանին:

Տղեն միտք բերեց զուր ախպըրկնկտիք: Զձին քշեց չընկավ
ճամպեն, չիրկուն մութուլուս էր, հասավ ջաղջի մե, մտավ ներս,
բարև տվեց, բարև առավ:

— Զաղչպա՛ն ախպեր,— ըսեց,— գիշերսի խոնախ չը՛ս պահի
զիսի ու զիմ ձին:

— Իմ գլխուն, յերեսին: Խոնախն օր կա՛ աստծուն է:

Տղեն զձին քաշեց ներս, խոշ ու բեշ էղան:

— Ախպե՛ր,— ըսեց շաղչպան,— դխոնախ հմա խոսքով չըն պա-
հի, գինամ յերկեն ճամպուց գիկաս, անոթի իս, մատ մե հաց ուտինք,
էլման խոշ ու բեշ կէնինք, յերկեն գիշեր է:

Պատեն կախուկ էր սուֆրե մե՛ խամչին կշտին, շաղչպան բերեց,
առավ դխամչին, զարկեց վըր սուֆրին, ըսեց.

— Բացվի՛, իմ սուֆրա, բացվի՛:

Հըտ ասելուն՝ սուֆրեն բացվավ, աստվածութեն ինչ բերք ու
բարիք օր ստեղծեր էր, լցվավ վրեն, կերան, խմեցին, զբերան
ուրանց սրբեցին նստան մեկ դեն: Զաղչպան ղսուֆրեն կախեց պա-
տից, ըսեց.

— Արի խաղանք:

— Ի՛նչ խաղանք, ի՛նչ չը խաղանք:

— Արի պալտովոցի խաղանք,— ըսեց շաղչպան,— ես կը պալ-
տըվիմ, դու զիսի գտի:

Հըտ ասելուն շաղչպան էղավ աներևութք: Տղեն դոր վեր գնաց,
դաշեց, չը գտավ: Մոտոտ քուռակ անկըջեն փսփսաց.

— էղեր է մուկ, մտեր է պատի ծակ:

— էղեր իս մուկ, մտեր իս պատի ծակ, հա՛: Դառնա՛մ կա-
տու, զքըզի բռնիմ:

Զաղչպան չելավ դուս:

— Դե գտի,— ըսեց շաղչպան ու նաբադիր էղավ:

Մոտոտ քուռակն ըսեց.

— էղեր է գորտ, մտեր է քարի տակ:

— էղեր իս գորտ, մտեր իս քարի տակ, հա՛: Դառնա՛մ լակ-
լագ, թալիմ բոկսիվի:

Զաղչպան չելավ դուս:

Վրա իրեքին շաղչպան ըսեց.

— Իդա հաղուն թե զիսի գտար, քընց քըզի ժիր չկա,— ըսեց
ու կորավ:

Մոտոտ քուռակն ըսեց.

— էղավ ցորնի հատ, մտավ շաղչի քարերու տակ:

Տղեն ըսեց.

— էղեր իս ցորնի հատ, մտեր իս քարերու արանք, հա՛: Յե-
նա՛մ զշաղչի ջուր թողիմ, քարեր զվոնին, զքըզի սղկին էնին ալուր:

Զաղչպան չելավ դուս:

— Ապրի՛ս, տղա,— ըսեց,— դու զիսի տարար իրեք հաղ լի։
Իդա սուֆրենն լի, խամշին լի քրզի փեշքեշ։

Ֆառչի աղոթրան դըռ շրացվեր էր, տղեն չելավ արար Յիմարի մը տվեց քուռկուն, չկեր գարի՛ ջաղջպնին, կոտ մե գարի լցեց չառեշ, կերավ, ջուր խմցուց, ջաղջպնից շնոխկլավ, բուռ մե օսկի լցեց ի ճանկ, հեծավ զուր ձին ու չընկավ ճամպեն, էկավ, էկավ, հասավ ուրանց տուն։ Ախպրտանք տեսան ուրախացան, պազվըռտվան, նստան խոշ ու բեշ էրին։ Հարսներ լի էկան պզտիկ տեգեր ձեռք՝ ի բարի գալուստ։

— Կնկտի՛ք,— ըսեց մեծ ախպեր,— ձեր էրկու լուս քոռնա, չէ՞ ձեր տեգը ճամպուց է էկի, անոթի է, չելեք, հաց ու դադի թատարուք էրեք։

— Չէ՛, չէ՛, հլա սաբը էրեք,— ըսեց պզտիկ ախպեր. «ու չելավ զսուֆրենն բերեց, խամշով զարկեց՝ «բացվի՛», իմ սուֆրա, բացվի՛» օր ըսեց, սուֆրենն բացվավ, էլ ի՛նչ ըսիս օր չը շարվան վրեն՝ Մշու տանձ, Արտամետու խնձոր, Խիզնա շեկ հազող, Խլաթա դամոն, Մոտկնա մեղր, Շամիրամ գեղի սեր, Բոթնա պանիր, Բուլանըխա լոշ, Բլեզնա զոզնի կարագ, կեր, հա՛ կեր, խլըսե՛լ գիկա։ Կերան, կշտացան, քաշվան մեկ կողմ, տղեն զսուֆրենն ծալեց, կախեց պատեն, խամշին լի հըտ կշտին։ Քնան, չելան, ազրատ պտի ուտեն, մեծ ախպերն ըսեց։

— Կնիկ, կնիկ, գնա զէն բումբարակ սուֆրենն բիր սա՛նք։

Կնիկ գնաց, զձեռք օր տվեց սուֆրենն՝ ձեռք կպավ սուֆրին, ճվաց, կանավ ուր տեղ։ Միջնեկ ախպըրկին ճիտկցավ գնաց, օր սուֆրենն բերեր, ընդրա ձեռք լի կպավ սուֆրին, վժաց, կանավ։ Պզտիկ ախպըրկին գնաց զտեգերկնկտոց ձեռքեր պրծուց, առավ զսուֆրենն բերեց։

— Ի՞մա է, ախպըրտի՛ք,— ըսեց պզտիկ ախպեր,— մկա ավտըցա՞ք, օր ձեր կնկտիք ծուռ ճամպով կէրթան, աչք ուրանց դուս է։ Էն վախթ ընձի չավտըցաք, քիչ էր մանցի, օր զիսի սպանեք, խո՞ սուֆրենն զիմ խոսք հաստատեց։

